ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	թիվ 3	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	Չի հրապարակվել	*Ընդունման վայրը*	Մոսկվա
Ընդունող մարմինը	Եվրասիական միջկառավարական խորհուրդ	*Ընդունման ամսաթիվը*	13.04.2016
Ստորագրող մարմինը	Եվրասիական միջկառավարական խորհրդի անդամներ	*Ստորագրման ամսաթիվը*	13.04.2016
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը		*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-Ի ԹԻՎ 90 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ապրիլի 2016 թվականի **թիվ 3** քաղ. Մոսկվա

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-Ի ԹԻՎ 90 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 111-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ Եվրասիական միջկառավարական խորհուրդը որոշեց.

«Եվրասիական տնտեսական միության շրջանակներում միջազգային պայմանագրերի, երրորդ պետությունների, դրանց ինտեգրացիոն միավորումների եւ միջազգային կազմակերպությունների հետ կնքվող Եվրասիական տնտեսական միության միջազգային պայմանագրերի, Եվրասիական տնտեսական միության մարմինների որոշումների պաշտոնական հրապարակման մասին» Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 90 որոշման մեջ կատարել հետեւյալ փոփոխությունները՝

ա) 4–րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«4. Սահմանել, որ՝

Եվրասիական տնտեսական միության մարմինների այն կարգադրությունները, որոնց դրույթները նախատեսում են դրանց հրապարակումը, ենթակա են Միության պաշտոնական կայքում հրապարակման ոչ ուշ, քան դրանց ընդունման օրվանից 3 օրացուցային օրվա ընթացքում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի այն հանձնարարականները, որոնց դրույթները նախատեսում են դրանց հրապարակումը, ենթակա են Միության պաշտոնական կայքում հրապարակման ոչ ուշ, քան դրանց ընդունման օրվանից 3 օրացուցային օրվա ընթացքում:».

բ) Եվրասիական տնտեսական միության շրջանակներում միջազգային պայմանագրերի, երրորդ պետությունների, դրանց ինտեգրացիոն միավորումների եւ միջազգային կազմակերպությունների հետ կնքվող Եվրասիական տնտեսական միության միջազգային պայմանագրերի, Եվրասիական տնտեսական միության մարմինների որոշումների պաշտոնական հրապարակման՝ նշված Որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«6. Պաշտոնական հրապարակման դեպքում Միության պաշտոնական կայքում նշվում են՝

սույն Կարգի 1-ին կետում նշված միջազգային պայմանագրերի համար՝ պայմանագրի անվանումը, պայմանագրի կնքման ամսաթիվն ու վայրը, պայմանագիրը ստորագրած անձինք, պաշտոնական հրապարակման ամսաթիվը, ուժի մեջ մտնելու ամսաթիվը (կարգը), պայմանագրի ժամանակավոր կիրառումն սկսելու ամսաթիվը (պայմանագրի ժամանակավոր կիրառման դեպքում).

Միության մարմինների որոշումների համար՝ որոշումն ընդունած Միության մարմնի անվանումը, որոշման անվանումը, ընդունման ամսաթիվը, պաշտոնական հրապարակման ամսաթիվը, որոշումը ստորագրած անձը (անձինք), գրանցման համարը, որոշումն ուժի մեջ մտնելու ամսաթիվը (կարգը):»:

Եվրասիական միջկառավարական խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից	**Բելառուսի Հանրապետությունից**	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ղրղզստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**